

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐՑԵՐՆ ԷԻՆ



Օգոստոսի 16-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Վի Թբիլիսիում, ուր աշխատանքով կապահովվի 190 մարդ: Արտադրության բացման ներդրումային կապիտալը կազմել է 3755202 լարի: Հացամթերքների արտադրություն կբացվի Քոբուլեթիում (աշխատանք կստանա 160 մարդ, կատարվել է 320 հազար լարիի ներդրում), Թբիլիսիի մերձակայքում սուրճի վերամշակման արտադրության համար ծախսվել է 11270 հազար լարի: Եվս մեկ (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

Նիստում վարչապետը հայտարարեց, որ «Արտադրի՛ր Վրաստանում» նախագծի շրջանակներում ծրագրված է բացել չորս նոր արտադրություն: Գիորգի Կվիրիկաշվիլու խոսքերով, մասնաձեռքերի արտադրության ձեռնարկություններից մեկը կբաց-

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԹԲԻԼԻՍԻՑ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՀԱՎԱՔԱՐԻ, ԷԼԻՍՅԵ ԵՎ ՄԵՏՐՈՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԹԱՂԱՄԱՏԵՐԻ ԸՆՏՐԱՏԱՐԱԾԵՐԻՑ ԴՊՏԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ Ե ԱՌԱՋԱՐԿԵԼ ԴԱՎԻԹ ՃԻՃԻՆԱՅԵՆ

Օգոստոսի 16-ին Մթածնիդրայի զբոսայգում անցկացված նախընտրական միջոցառմանը, կառավարող «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը ներկայացրեց Թբիլիսիի ընտրատարածքներից իր մեծամասնական 22 թեկնածուներին:



խանատվությունը եւ պատրաստ են ուժերի ներածին չափ նպաստել մայրաքաղաքի բնակիչների առջև ծառայած հիմնախնդիր-

Ներկայացնելով թեկնածուներին, կուսակցության նախագահ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին բնութագրեց անխտիր յուրաքանչյուրին եւ հայտարարեց, որ կուսակցությունն առաջադրել է արժանավորներին, որոնք քաջ գիտակցում են պատաս-

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՔՈ ԶԱՅՆԸ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ Է» ՆԱԽԸՆՏՐԱՐԵՆԱԿԸ



Ելույթ ունենալով Սցիսթա-Մ- պետք է շրջեք քաղաքներում, գյու-

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախաձեռնությամբ մեկնարկեց «Քո ձայնը մեր ապագան է» նախընտրական արշավը, որը նպատակ ունի ներգրավել երկրի քաղաքացիներին հոկտեմբերի 8-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին:

թիանեթի երկրամասի երիտասարդների առջև, նախագահը հայտարարեց. «Դուք ղերում եւ համոզեք մարդկանց, որ նրանք պետք է կատարեն իրենց ընտրությունը: Դուք պետք է հորդորեք նրանց՝ ուշադրությամբ լսել քաղաքական գործիչներին, նրանց

XXXI ԱՄՈՒՄՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ԱՌԱՋԻՆ ՈՍԿԵ ՄԵՂԱԼՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒՄ

Ռիո դե Ժանեյրոյում շարունակվում են 31-րդ ամառային օլիմպիական խաղերը: Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները առաջին ոսկե մեդալները գրանցեցին իրենց ակտիվում: Օլիմպիական չեմպիոններ դարձան Լաշա Տալախաձեն եւ Արթուր Ալեքսանյանը:

Օգոստոսի 17-ին, իրոք բացառիկ օր էր նորանկախ Վրաստանի եւ Հայաստանի օլիմպիական հավաքականների համար: Այդ օրը ծանրամարտի 105+ քաշային կարգի մրցաշարի ավարտից հետո՝ ողջ պատվանդանը զբաղեցվեց մեր մարզիկներով:

պիական չեմպիոնի կոչումը: Նշենք, որ վրացի ծանրամարտիկը երկամարտի արդյունքով, սահմանեց համաշխարհային ռեկորդ, մեկ կիլոգրամով գերազանցելով խուսեյին Ռեզազադեի աշխարհի ռեկորդը:



ԼԱՇԱ ՏԱԼԱԽԱԶԵ



ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Օգոստոսի 17-ին, իրոք բացառիկ օր էր նորանկախ Վրաստանի եւ Հայաստանի օլիմպիական հավաքականների համար: Այդ օրը ծանրամարտի 105+ քաշային կարգի մրցաշարի ավարտից հետո՝ ողջ պատվանդանը զբաղեցվեց մեր մարզիկներով:

Վրացի մարզիկ Լաշա Տալախաձեն, հիման ու պոկման մարզաձեւերում, ընդհանուրը հավաքելով 473 կգ, նվաճեց օլիմ-

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԿՅԱՆՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է»՝ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կենսաթոշակառուների համար արժանավոր ծերությունն ապահովելու նպատակով, կառավարությունը նախաձեռնել է նոր նախագիծ: «Կյանքը շարունակվում է» նախագծի շրջանակներում գործարարներին տրվում է կենսաթոշակառուներին աշխատանքի ընդունելու հնարավորություն, իսկ կառավարությունը՝ իր հերթին, գործարարներին որոշակի արտոնություններ է տրամադրում:



«Վրացական երազանքը» նախընտրական փուլի շրջանակներում ներկայացնում է իր

գործունեության ծրագիրը: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-ԻՆ ԱՆՂԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՅԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱԶԵԻ ՈՉ ԲԼՈԿԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅԱՆԸ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին ստորագրել է Վրաստանի Սահմանադրության նախաբանում ուղղումներ անելու նախաձեռնությունը՝ եվրատլանտյան ինտեգրումը որպես պետության նպատակ սահմանելու համար:

Նա առաջարկում է Սահմանադրությունում կատարել փոփոխություն եւ երկրի հիմնական օրենքում ամրացնել ՆԱՏՕ-ին անդամագրման միտումը: «Ես որոշել եմ դիմել իմ գործընկերներին, Վրաստանի խորհրդարանի անդամներին, որպեսզի խորհրդարանի հաստատմանը ներկայացնեն սահմանադրական ուղղումները, որոնք

պահանջում են երկրի անվտանգությունը, նրա ապագան ու բարեկեցությունը: Մասնավորապես, Սահմանադրության նախաբանում, որտեղ խոսվում է Վրաստանի ժողովրդի ձգտումների մասին, պետք է հավելվել հետեւյալ արտահայտությունը:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՐՅՈՒՅԹ՝ ՍԱԴԱՆԼՈՒ-ԲԱԳՐԱՏԱՆԵՆ «ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐԳ» ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սադախլո-Բագրատաշենի հսկիչ անցակետում Դեբեդ գետի վրայով կամրջի նախագծման եւ շինարարության հայտանրցույթ է հայտարարվել: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի տարածաշրջանների զարգացման եւ ենթակառուցների նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը:

Հայտանրցույթը կշարունակվի մինչեւ սեպտեմբերի 20-ը Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Էլեկտ-

րոնային գնումների համակարգում: Պայմանագրորդ ընկերությունն ընտրելու առաջին փուլում

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԹԲԻԼԻՍԻՑ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)


ների կարգավորմանը:

Ներկայացրած թեկնածուների թվում են. Իսահիի շրջանի 9-րդ ընտրատարածքից, որը ներառում է Հավլաբարի, Էլիայի, Մետրոշինարարների թաղամասերը, Չուղուրեթի շրջանի մի մասը, «Վրացական երազանքը» առաջադրել է անվանի գործարար, 1999-2003 թվականների խորհրդարանի պատգամավոր Դավիթ Գիծինաձեի թեկնածությունը: Նշենք, որ հավլաբարեցի Դավիթ Գիծինաձեն քաջ հայտնի է թբիլիսահայերին եւ վերոնշյալ թաղամասերի բնակիչներին: Նա պարբերաբար մասնակցում է թբիլիսահայ համայնքի կողմից անցկացվող գրեթե բոլոր, եկեղեցական եւ մշակութային միջոցառումներին, քաջ ծանոթ է այդ ընտրատարածքի հիմնախնդիրներին:


Մթածմինդայի շրջանի 17-րդ ընտրա-

տարածքում «Վրացական երազանքը» թեկնածությունն չի առաջադրում, բայց աջակցում է անկախ թեկնածու, Վրաստանի արտաքին գործերի նախկին նախարար Սալոմե Ջուրաբիշվիլուն թեկնածությանը: Գլխահի շրջանի 20-րդ ընտրատարածքից ներկայացվել է Կոբա Կոբալաձեի, նույն շրջանի 21-րդ ընտրատարածքից՝ ճանաչված ֆուտբոլիստ Լեւան Կոբիաշվիլու, 22-րդ ընտրատարածքից՝ Լեւան Կոբերիձեի, Դիդուբեի շրջանի 15-րդ ընտրատարածքից՝ Ջազա Պապուաշվիլու, 16-րդ ընտրատարածքից՝ Իլիա Ծուլախի, Վակեի շրջանի երկրորդ ընտրատարածքից՝ Բիծինա Գեգիձեի, 3-րդ ընտրատարածքից՝ Ջազա Խուցիշվիլու, Իսահիի շրջանի 8-րդ ընտրատարածքից՝ Իրակլի Աբուսերիձեի, 10-րդ ընտրատարածքից՝ Բեքա Նացվիշվիլու, Կրծանիսի շրջանի 7-րդ ընտրատարածքից՝ Բեքա Օղիշարիայի, Նաձալադեի շրջանի 17-

րդ ընտրատարածքից՝ Սուխ Կիլաձեն, 18-րդ ընտրատարածքից՝ Միխեիլ Կավելաշվիլու, 19-րդ ընտրատարածքից՝ Ջազա Գաբունիայի, Սաբուրթալոյի շրջանի 4-րդ ընտրատարածքից՝ Մամուկա Միդնարաձեի, 5-րդ ընտրատարածքից՝ Նինո Գոգուաձեի, 6-րդ ընտրատարածքից՝ Լեւան Գոգիչաիշվիլու, Սամգրիի շրջանի 11-րդ ընտրատարածքից՝ Գիորգի Մոսիձեի, 12-րդ ընտրատարածքից՝ Մարիամ Ջաշիի, 13-րդ ընտրատարածքից՝ ճանաչված ըմբշամարտիկ Շոթա Խաբարելու եւ Չուղուրեթի 14-րդ ընտրատարածքից՝ Վրաստանի խորհրդարանի մեծամասնականների լիդեր Գիա Վոլսկու թեկնածությունները:



ԴԱՎԻԹ ԳԻԾԻՆԱԶԵ



ԱՄՆ

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՄԱՐԱԹՈՆՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐԸ ՔԼԻՆԹՈՆՆ Է

Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ-ի նախագահի թեկնածու Հիլարի Էլինթոնը երկրում իր ժողովրդականության ցուցանիշով ոչ մեծ առավելություն է պահպանում հանրապետական մրցակից Դոնալդ Թրամփի նկատմամբ: Այդ մասին, ինչպես տեղեկացանք, վկայում են համազգային մոր հարցման օգոստոսի 18-ին հրապարակված արդյունքները, հարցում, որն անցկացրել է Pew հետազոտական կենտրոնը: Վերջին տվյալների համաձայն՝ նոյեմբերին նշանակված ընտրություններում Էլինթոնի օգտին պատրաստ է քվեարկել հարցվածների 41 տոկոսը, Թրամփի օգտին՝ 37 տոկոսը:

ՄԵԿՆԱՐԿԵՅ՝ «ՔՈ ԶԱՅՆԸ ՄԵՐ ԱՂԱԿԱՆ Է» ՆԱԽԸՆՏՐԱՐԵԱԿԸ

(Սկզբը՝ 1-ին էջում)

խոստումները եւ այն, թե որքանով են այդ խոստումներն իրատեսական ու իրագործելի»:

Նախագիծը նախատեսում է

ամառային դպրոցների ստեղծում երկրի ութ քաղաքներում: Արշավի գլխավոր նպատակը երկրի քաղաքացիներին, հատկապես երիտասարդներին, ընտրություններին մասնակից դարձնելն է: Այս արշավը չի պաշտ-

պանում քաղաքական կուսակցություններից որեւէ մեկին: «Հատկապես կարեւոր է այն, որ դուք մարդկանց չեք խնդրելու իրենց ձայնը տալ այս կամ այն քաղաքական գործչին: Ձեզ անհրաժեշտ է

անել մի բան. դուք պետք է երկրի քաղաքացիներին համոզեք 2016 թվականի հոկտեմբերի 8-ին զալ ընտրական տեղամասեր եւ կատարել ընտրություն»,- հավելել է նախագահը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

Կալիֆոռնիայի իշխանություններն արտակարգ դրություն են հայտարարել Սան Բեռնարդինոյի տարածքում՝ այստեղ մոլեզվաճեղճ անտառային հրդեհների պատճառով: Կրակն ընդհուպ մոտեցել է բնակելի շենքերին: Աղետի շրջաններից տարիանում են ավելի քան 82 հազար բնակիչները:

Reuters գործակալության տվյալներով, չնայած 700-ից ավելի հրդեհների ջանքերին, Կահոն Պասսի շրջանում ավելի քան 120 հեկտար մակերեսով տեղամաս է այրվել: Կրակի տարածմանը նպաստում են սաստիկ քամին եւ շոգ եղանակը:

ԹՈՒՐԻԱ

ՄԵԿ ՕՐՈՒՄ ԵՐԿՈՒ ԱՐԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Վանում անցած գիշեր Իսթբլե պողոտայում ոստիկանության բաժանմունքի մոտ ավտոմեքենա է պայթեցվել, ինչի հետեւանքով զոհվել է 5, վիրավորվել՝ 40 մարդ:

Պայթել է պայթուցիկով լիցքավորված Nissan տեսակի ավտոմեքենա: Սպանվածներից 3-ը քաղաքացիական անձինք են, 2-ը՝ ոստիկաններ: Վիրավորվածներից 18-ը եւս ոստիկաններ են:

Վանից հետո նույն օրը Թուրքիայի Էլազիղ քաղաքում տեղ ունեցած երկրորդ ահաբեկչական գործողության արդյունքում 3 մարդ զոհվել, 146-ը վիրավորվել են:

Էլազիղի ոստիկանությունը համոզմունք է հայտնել, որ ահաբեկչական գործողությունն իրագործել է Քրդստանի աշխատավորական կուսակցությունը (PKK):

Պայթյունի պատասխանատվությունը դեռեւս որեւէ կազմակերպություն իր վրա չի ստանձնել:

ԵՐԴՐԱՆԻ

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՂԱՅՆՎԵԼ ԵՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանին մոր լիազորություններ են շնորհվել:

Այսուհետեւ Թուրքիայի նախագահին իրավունք է վերապահվել՝ նշանակել զինված ուժերի գլխավոր շտաբի պետին (Թուրքիայի սահմանադրությանը նախագահին նման լիազորություն տրված չէ): Նշենք, որ հաղորդագրության մեջ չի նշվում, թե Թուրքիայի որ ատյանի որոշումով է Էրդողանին շնորհվել այդ լիազորությունը:

Նախկինում Թուրքիայի ԶՈՒ ԳՇ պետը նշանակվում էր Բարձրագույն ռազմական խորհրդում քվեարկությանը եւ այդ պաշտոնը զբաղեցնում էր 4 տարի:

ԶԵՎԱՎՈՐՎԵՅ՝ «ՊԱՍՏԱ ԲՈՒՐՃՈՒԼԱԶԵ ՊԼԱՏՖՈՐՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԴԱՇԻՆՔԸ



Հոկտեմբերի 8-ին Վրաստանում նշանակված խորհրդարանական ընտրություններին կնասնակցի մոր քաղաքական միավորում, որի կազմում կլինեն վրացի օպերային երգիչ Պաստա Բուրճուլաձեի «Շարժում-պետություն ժողովրդի համար» կուսակցությունը եւ «Ազգային շարժման» նախկին անդամներ Ջուրաբ Ջավաիթի «Նոր քաղաքական կենտրոն-Գիրչի», Գիորգի Վաշաձեի «Քաղաքացիական պլատֆորմ-Նոր Վրաստան» եւ Ալեկո Կացիտաձեի «Նոր աջեր» կուսակցությունները:

Պ ա ա տ ա Բուրճուլաձեի եւ Վրաստանի քաղաքացիների կյանքը»,- հատուկ հայտարարված ճեպատուլիսի ժամանակ հայտարարեց Պաստա Բուրճուլաձեն: Նրա խոսքերով, միավորման գլխավոր գերակայություններն են անդամակցությունը ՆԱՏՕ-ին, արեւմտամետ քաղաքականությունը, երկրի տնտեսության աճը եւ արդար Վրաստանի ստեղծումը:

վում... Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի, իշխանության գալով, ոչ թե չորս տարում, այլ մի քանի ամսվա ընթացքում բարելավենք մեր քաղաքացիների կյանքը»,- հատուկ հայտարարված ճեպատուլիսի ժամանակ հայտարարեց Պաստա Բուրճուլաձեն:

Նրա խոսքերով, միավորման գլխավոր գերակայություններն են անդամակցությունը ՆԱՏՕ-ին, արեւմտամետ քաղաքականությունը, երկրի տնտեսության աճը եւ արդար Վրաստանի ստեղծումը:

ՌՈՒՄԱՄԵՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒՐՄ ՄԵԱՑ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿԻՑ

Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը լուծարեց առաջիկա խորհրդարանական ընտրություններում «Կենտրոնականներ» («Ցենտրիստներ») կուսակցության գրանցումը: Պատճառը հանդիսացավ կուսակցության լիդեր Թեմուր Խաչիշվիլու: որպես ղեկավարի կարգավիճակի վերացումը:

նի դրոշներն ու տանկերը: Տեսահոլովակը բողոքի ալիք առաջացրեց հասարակության շրջանում եւ հաջորդ օրն այն հանվեց եթերից: Բացի այդ, մի շարք կուսակցություններ, այդ թվում են «Վրացական երազանքը», ինչպես նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների նշանակալից մասը հայ-

տարարեց, որ մտադիր են այդ կուսակցության արգելման պահանջով հայտ ներկայացնել Սահմանադրական դատարան:

«Այսօր մեզ հայտնի դարձավ, որ քաղաքական «Ցենտրիստներ» միավորման ղեկավարի լիազորությունները իրավաբանական ուժ չունեն, հետեւաբար ես ստորագրեցի քաղաքական «Ցենտրիստներ» միավորման գրանցումը անվավեր ճանաչելու մասին կարգադրությունը»,- հայտարարեց ԿԸՀ նախագահ Թամար Ժվանիան:

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-ԻՆ ԱՆՂԱՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՇՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՅԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

«Ջբաղեցնել լիարժեք տեղ ժողովրդավարական պետությունների, անվտանգության ու համագործակցության եվրատլանտյան համակարգում: Դա կլինի մեր հետեւողական քաղաքականության արտահայտությունը»,- ընդգծեց Դավիթ Ուսուփաշվիլին:

Յին դրոշներն ու տանկերը: Տեսահոլովակը բողոքի ալիք առաջացրեց հասարակության շրջանում եւ հաջորդ օրն այն հանվեց եթերից: Բացի այդ, մի շարք կուսակցություններ, այդ թվում են «Վրացական երազանքը», ինչպես նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների նշանակալից մասը հայ-

կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը, այդ թվում են «Վրացական երազանքը», դա համարելով վտանգավոր երկրի համար, քանզի այն լրիվությամբ համապատասխանում է Վրաստանի տարածքի 20 տոկոսը բռնազավթած Ռուսաստանի շահերին:

Ավելացնենք, որ ոչ միանշանակ արձագանք առաջացրեց նաեւ Դավիթ Ուսուփաշվիլու առաջարկությունը: Օրինակ, խորհրդարանական մեծամասնությունը մտադիր չէ պաշտպանել Վրաստանի արտաքին քաղաքական կուրսի կապակցությամբ սահմանադրությունում

խորհրդարանի խոսնակի՝ նման նախաձեռնությունը պայմանավորված է նրանով, որ նախօրեին ժողովրդավարական շարժման լիդեր Նինո Բուրճանաձեն խորհրդարանին ներկայացրեց Վրաստանին ոչ բլոկա-

Նշենք, որ Նինո Բուրճանաձեի սույն նախաձեռնությանը բացասաբար վերաբերվեցին երկրի քաղաքական կուսակցությունների ու ոչ կառավարական

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ԿՅԱՆՔԸ ԸՆԴՈՒՆԱԿՎՈՒՄ Է՝ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՌՈՒՆԵՐԻ շԱՄԱՐ

(Սկզբը՝ 1-ին էջում)

րիկաշվիլին հանդես եկավ նոր նախաձեռնությամբ: Նրա խոսքով, բոլոր կենսաթոշակառուներին պետք է ընձեռել աշխատելու հնարավորություն: Հարցի կարգավորմամբ էլ, կառավարությունը նախաձեռնել է «Կյանքը շարունակվում է» նախագիծը:

Վարչապետի պարզաբանմամբ, դա կենսաթոշակառուներին աշխատանքի տեղավորելու նախագիծ է, որը նախատեսում է հարկային արտոնություններ այն ընկերություններին, որոնք աշխատանքով կապահովեն կենսաթոշակառուներին:

«Դա ոչ մի դեպքում կենսաթոշակի կամ սոցիալական նպաստի վերացում չի նշանակում: Ընդհակառակը՝ լրացուցիչ եկամուտ է այն մարդկանց համար, ովքեր ունեն հարուստ փորձ ու ներուժ: Լավ կլինի, եթե նրանք իրենց փորձը, թեկուզե՛ս փոքր մասշտաբներով, փոխանցեն երիտասարդ սերնդին:

Այս նախագիծը կոչել ենք «Կյանքը շարունակվում է» եւ, հավանաբար, մոտ ժամանակներում տեղի կունենա դրա շնորհանդեսը: Հարցի շուրջ մեծ աշխատանք են իրականացնում աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության ու ֆինանսների նախարարությունը»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին եւ հավելեց, որ սույն նախագծով նշանակալից գործ է կատարվում, քանի որ շատ մարդկանց կյանքը նոր իմաստ ձեռք կբերի: Ինչպես նշեց Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խաղոբիձե, վերոնշյալ նախագծի վերաբերյալ, մոտ ժամանակներս առավել մտադրամասն տեղեկատվություն կփոխանցվի: Նախարարի խոսքերով, նախագիծը նախատեսում է արտոնություններ ինչպես կենսաթոշակառուներին, այնպես էլ՝ գործատուների համար: Կենսաթոշակառուի կողմից աշխատելու դեպքում, նրա կենսաթոշակն ու սոցիալական օգնությունը պահպանվում է, իսկ գործատուին այդ հարցում խրախուսելու նպատակով, կառավարությունը մշակել է նոր մեխանիզմներ:

Հատկանշական է, որ վրաց գործարարների նշանակալից մասը պատրաստ է աշխատանքով ապահովել կենսաթոշակառուներին: Մասնավոր հատվածի ներկայացուցիչների հայտարարություններով, տարիքավոր մարդկանց շրջանում, հնարավոր է գտնել լուրջ մասնագետներ, թեպետ նաեւ նշում է, որ մինչ այդ էլ մասնավոր հատվածը, հնարավորության սահմաններում, օգտվել է կենսաթոշակառուների փորձից եւ ունակություններից:

Մեծ շնորհակալություններով Վրաստանի կառավարությունը քննարկում է Օնլայն վարկերի կարգավորման ներդրման վերաբերյալ օրենքի նախագիծը, ըստ որի, հնարավոր է սահմանափակումներ ներդրվեն առավելագույն տոկոսադրույքի վրա: Բացի այդ, նախատեսվում է, որ Օնլայն վարկերի կարգավորիչը լինի Ազգային բանկը: Նշենք, որ, ներկա դրությամբ, ֆինանսական հատվածի այդ մասն ընդհանրապես չի վերահսկվում:

Օնլայն ընկերությունների մի մասը համաձայն է մասն մոտեցման հետ: Օնլայն վարկատրաման հատվածը Ազգային բանկի ենթակայության ներքո անցկացնելու վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քուսիշվիլին:

«Նորապես համոզված ենք, որ՝ որպես կարգավորիչ, Օնլայն վարկերի դեպքում պետք է լինի Ազգային բանկը, եւ դա ճիշտ որոշում է: Օրինանախագծի իմաստը սպառողների իրավունքների պաշտպանությունն է: Ցավոք, այսօրվա դրությամբ, Վրաստանի բնակչության ֆինանսական հարցերի իմացությունը բավականին ցածր մակարդակի վրա է, եւ քաղաքացիների մեծ մասը չի վիճակի չէ պաշտպանել իր շահերը: Հետեւաբար, պետության խնդիրը կայանում է նրանում, որ ներդրվեն կարգավորումներ, որոնք սպառողներին թույլ կտան ստանալ անհրաժեշտ ծառայություններ՝ նվազագույնի հասցնելով ռիսկերը»,- հայտարարեց Դմիտրի Քուսիշվիլին:

Crediton.ge ընկերության ղեկավար Գիորգի Լոմիձեի կարծիքով, մասն կարգավորիչների ներդրումը ողջունելի է: «Մեր ընկերության վրա բացա-

ՕՆԼԱՅՆ ՎԱՐԿԵՐ

ԿԿԱՐԳԱՎՈՐՎԵՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՅ

Օնլայն ընկերությունների մի մասը համաձայն է մասն մոտեցման հետ: Օնլայն վարկատրաման հատվածը Ազգային բանկի ենթակայության ներքո անցկացնելու վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քուսիշվիլին:

«Նորապես համոզված ենք, որ՝ որպես կարգավորիչ, Օնլայն վարկերի դեպքում պետք է լինի Ազգային բանկը, եւ դա ճիշտ որոշում է: Օրինանախագծի իմաստը սպառողների իրավունքների պաշտպանությունն է: Ցավոք, այսօրվա դրությամբ, Վրաստանի բնակչության ֆինանսական հարցերի իմացությունը բավականին ցածր մակարդակի վրա է, եւ քաղաքացիների մեծ մասը չի վիճակի չէ պաշտպանել իր շահերը: Հետեւաբար, պետության խնդիրը կայանում է նրանում, որ ներդրվեն կարգավորումներ, որոնք սպառողներին թույլ կտան ստանալ անհրաժեշտ ծառայություններ՝ նվազագույնի հասցնելով ռիսկերը»,- հայտարարեց Դմիտրի Քուսիշվիլին:

«Ներկայում ֆինանսական հատվածի կայունության կարգավորիչը Ազգային բանկն է, հետեւաբար, լրիվությամբ տրամաբանական ու բնական է, որ Օնլայն բանկերի նկատմամբ վերահսկողությունն էլ

սակաւ առումով դա ոչ մի ազդեցություն չի գործի: Առանց այդ էլ, մենք շուկայում աշխատում ենք պահպանել միջազգային չափորոշիչներն ու կարգավորիչները: Բնականաբար, լավ կլինի, եթե մյուսներն էլ կատարեն նույնը, եւ այդ ամենը վերահսկվի Ազգային բանկի կողմից: Ինչ վերաբերում է կոնկրետ փաստաթղթին, որի շուրջ աշխատանքներ են տարվում, ապա տեղյակ ենք, որ այն մշակվում է, սակայն մանրամասներին ծանոթ չենք: Այդ հարցով կառավարության ներկայացուցիչներից ոչ ոք մեզ չի դիմել, ուստի միայն կարող ենք ենթադրել, թե ինչ կարգավորիչներ են մտադիր ներդնել: Սակայն, անկասկածաբար, բիզնեսը կարող է եւ պետք է հարմարվի դրա հետ»,- ասաց նա:

CCloan.ge ընկերության վարչության ղեկավար Գիա Տարիելիձեն տրամաբանական եւ բացատրելի է համարում այդ հարցում որպես կարգավորիչ, Ազգային բանկի դերը:

«Ներկայում ֆինանսական հատվածի կայունության կարգավորիչը Ազգային բանկն է, հետեւաբար, լրիվությամբ տրամաբանական ու բնական է, որ Օնլայն բանկերի նկատմամբ վերահսկողությունն էլ

գտնվի Ազգային բանկի տնօրինության տակ»,- հայտարարեց նա: Ինչ վերաբերում է նոր օրինականախագծի բովանդակությանը, ապա, ինչպես նշեց Գիա Տարիելիձեն, ինքն այդ մասին տեղեկություն չունի:

Նշենք, որ Օնլայն վարկերի վերաբերյալ իր տեսակետն է հայտնել նաեւ Ազգային բանկի նախագահ Կորբա Գվենետաձեն: Նրա խոսքերով, այդ հարցը շուտափույթ կարգավորման կարիք ունի:

«Այդ թեմային հարկ է առանձնակի ուշադրություն հատկացնել: Ինչպես գիտեք, ներկա դրությամբ, Ազգային բանկը չի վերահսկում Օնլայն վարկերի ընկերությունների գործունեությունը: Պետությունը պետք է որոշի, թե ինչպես է վերահսկվելու այդ հատվածը: Տարբեր երկրներում այդ հարցում տարբեր մոտեցումներ են իրականացվում: Այդ հարցին մենք մոտենում ենք սպառողի իրավունքների պաշտպանության տեսանկյունից, սպառողի, ում տնտեսական վիճակը չպետք է վատթարանա վերցրած վարկերի արդյունքում: Սպառողը պետք է հնարավորություն ունենա գնահատել Օնլայն վարկերի հետ կապած ծախսերն ու ռիսկերը»,- հայտարարեց Ազգային բանկի ղեկավարը:

ԱՐԵՎԻԿԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ



ԹԻՖԼԻՍՅԱՆ ՄԵԿԵՆԱՍ, ԲԱՐԻ ՄԱՐԳ ԳԱԲՐԻԵԼ ԹԱՄԱՄՇԵՎԸ

Գաբրիել Թամամշեւ. մեկենաս եւ բարեգործ, առաջին գիլդիայի վաճառական, Թիֆլիսի եւ Ստավրոպոլի պատվավոր քաղաքացի, Ստանիսլավի երրորդ աստիճանի շքանշանի ասպետ, ինչպես նաեւ բարի ու մեծ հոգու տեր մարդ, որը միշտ օգնություն էր ցուցաբերում կարիքավորներին, նրանց կյանքում թողնելով անջնջելի հետք:

պայմանագիր է կնքում պարենի մատակարարման հարցով, Կովկասյան կորպուսի գործերի կարիքների համար:

1839 թվականին Ստավրոպոլի բարեկեցության թերացումներից մեկը ջրամատակարարման ցածր մակարդակն էր: Այն ժամանակ խմելու ջուրը ստանում էին Կարբինի աղբյուրից, որը գտնվում էր քաղաքի սահմաններից դուրս: Ջրկիրը ջուրը բերում էր տակառով եւ այն վաճառում տեղի բնակիչների վրա: Որպեսզի մեկընդմիջտ լուծվեր ջրամատակարարման հարցը, Թամամշեւն իր միջոցներով կառուցում է կավե խողովակներով Ստավրոպոլի ջրատարը:

1841 թվականին Թամամշեւի միջոցներով Ստավրոպոլում կառուցվում է հաղթակամարը եւ, քանի որ այն գտնվում էր թբիլիսյան Պահակատան շրջանում, որտեղից սկսվում էր Գեորգիեսկ քաղաքը եւ, ապա Թբիլիսի տանող ճանապարհը, այն ուներ նաեւ այլ անվանում՝ Թբիլիսյան դարպաս:

Այդ ժամանակահատվածում Գաբրիել Թամամշեւը ինտենսիվ կերպով զբաղված էր նաեւ Թիֆլիսի զարգացմամբ:

Քաղաքում նրա կառույցներից նշանակալից են թիֆլիսյան պետական (օպերային) թատրոնը, որտեղ առաջին անգամ հանդիսատեսին ներկայացվեցին «Կարմեն» եւ «Հիո-չիո-սան» օպերաները: Այդ թատրոնը հայտնի էր նաեւ Թամամշեւի թատրոն անունով: 1846-1851 թվականներին կառուցված այդ շենքի ճարտարապետն էր իտալացի Ջիովաննի Սկոլդիերին: Ներսուն ներկայացվել էին հայտնի նկարիչ Գրիգորի Գագարինի կտավները: Օպերային թատրոնի մյուս հարդարանքները՝ բազկաթռուները, ջահերը, լուսամտափոփները, ժամացույցները բերել էին Մոսկվայից, Պետերբուրգից, Փարիզից: Թատրոնի շենքը կառուցվել էր մավրիտյան ոճով, աչքի էր ընկ-

նում գեղեցկությամբ եւ հիասքանչությամբ: Թատրոնը տեղավորում էր 700 հանդիսատես եւ այն ժամանակ հանդիսանում էր Կովկասի ամենախոշոր թատերական շինությունը: Բացի այդ, շենքում տեղակայված էին 266 առեւտրական կետեր: Թատրոնի շինարարության ժամանակ ճարտարապետներին եւ շինարարներին կողմից օգտագործվեց թատերական ճարտարապետության եվրոպական փորձը, այսպես կոչված, բենական խոր բացվածքով յարուսային թատրոնի տեսակը:

Բացի այդ, հիմքերի շինարարության ժամանակ ստորջրյա Թիֆլիսի կենտրոնում գտնվող էրեւանյան հրապարակով անցնող ստորջրային հոսքերը, հարկ էր անցկացնել խողովակներով եւ ապահովել ջրի անարգել հոսքը: Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը որոշեց ջրի անարգել հոսքի ապահովման համար ձեռնարկել լրացուցիչ միջոցներ: Ծրագրված մեկի փոխարեն, որոշվեց կառուցել երկու ստորգետնյա հարկեր, նկատելիորեն մեծացվեց նաեւ պատի հաստությունը: Բացի այդ, թատրոնի շուրջ պատրաստվեց բաց ջրանցք՝ նկուղային հարկերի լուսավորության համար եւ բարձրացվեց քարե պատ «Սոլոլայան ջրերի հոսքի դեմ» ու կառուցվեց նաեւ «սալիկավոր» մայթ:

1851 թվականի նոյեմբերի 8-ին Դոմիցետիի «Լյուչիա դի լամբերտու» օպերայով տեղի ունեցավ թատրոնի հանդիսավոր բացումը: Նախնական խաղացանկը կազմված էր դասական օպերային եւ բալետի ներկայացումներից:

Այդ տարիներին Թիֆլիս այցելած ֆրանսիացի գրող Ալեքսանդր Դյումա-հոր կարծիքով իր գեղեցկությամբ թատրոնը չէր զիջում աշխարհի լավագույն թատրոններին:

Ցավոք, 1874 թվականի հոկտեմբերի

11-ին թատրոնը այրվեց նրա կողքին գտնվող Գաբրիել Թամամշեւի Քարվանսայի հետ միասին: Հրդեհից հետո Քարվանսայն վերականգնվեց, սակայն առանց թատրոնի: 1930 թվականին էրեւանյան հրապարակի (ներկայիս Ազատության հրապարակը) վերանորոգման ժամանակ Քարվանսայն քանդեցին, իսկ 1956 թվականին հրապարակի կենտրոնում, Քարվանսայի տեղում կանգնեցվեց Լենինի հուշարձանը: 1990-ական թվականներին հուշարձանը հանեցին, եւ երկար տարիներ հրապարակը մնաց դատարկ: 2001 թվականին այդ տեղում սկսվեց շատրվանի շինարարությունը, որի ընթացքում էլ հայտնաբերվեց թատրոնի հիմքն ու յարուններից մեկը: Մի քանի տարի անց, շատրվանի տեղում կանգնեցվեց Չուրաբ Ծերեթելու 44 մետրանոց Սուրբ Գիորգիի կոթողը («Ազատության մոնումենտ»):

«Գաբրիել Թամամշեւի բարեգործությունը նրա գործունեության լավագույն դրսևորումներից մեկն էր: Նա առեղծվածային մարդ էր, սակայն Թիֆլիսի եւ Ստավրոպոլի բարեկարգման համար երբեք միջոցներ չէր խնայում»,- գրում էր նրա ժամանակակիցներից մեկը:

Ապա հետեւեցին արաղազը եկատերինոդարում (Կրասնոդար), որը սննդամթերք էր մատակարարում Անդրկովկասի բոլոր խանութներին, Կովկասի խոշորագույն ռազմական հոսպիտալը, որը կամարային անցուղով էր Սուրբ Աստվածամայր եկեղեցիով համալիր էր կազմում: Հուրախություն հռոմա-կաթոլիկական համայնքի, Վորոնցովի փողոցում կանգնեցվեց կաթոլիկ եկեղեցի, կառուցվեցին Սուրբ Բարբարա, Իվանովո Մարիական կանանց մեծաստանը եւ Հաղթականարը՝ Ստավրոպոլում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)